ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ РЕЦЕНЗИИ

EMMA KHANZADIAN. Metsamor 2. La necropole, v. I. Les tombes du bronze moyen et recent. Recherches et publications Neuchatel—Paris, 1995.

Հնագույն Հայաստանի պատմամշակութային ժառանգության ուսումնասիրությանը նպատակամղված հայ-բելգիական համագործակցությունը նշանավորվեց ևս մեկ արժեքավոր աշխատության հրատարակությամբ։ «Civilisations du Proche Orient»-ի խմբագրությունը լույս ընծայեց պատմական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի վարիչ Է. Վ. Խանզադյանի «Մեծամոր 2» գիրքը, որը վաստակաշատ հնագետի թվով հինգերորդ մենագրությունն է։

Աշխատության մեջ ամփոփ ներկայացվում է Մեծամորը՝ Արարատյան դաշտավայրի կենտրոնում, ջրերով ու բուսականությամբ հարուստ գեղատեսիլ վայրում գտնվող և ներկայիս տվյալներով դեռևս մ. թ. ա. V հազարամյակից մինչև մ. թ. XVIII դարը գործող այդ հուշարձանը։

Հեղինակի մտահղացմամբ, Մեծամորի վերջին 3 տասնամյակների պեղումների արդյունքները պետք է ներկայացվեն առանձին պրակներով՝ ըստ դարաշրջանների և ըստ հուշարձանների տեսակների։ Ներկա աշխատությունն այդ ծրագրի մասն է, ուր ընդգրկված են միջին և ուշ բրոնզի դամբարանային համալիրների հետազոտման արդյունքները։ Մենագրության թեման Մեծամորի բնակիչների մի քանի սերունդների մշտական հանգստարան հանդիսացող, մոտ 2000 հա մակերես զբաղեցնող դամբարանադաշտի ուսումնասիրությունն է։ Նշվում է, որ դամբարանադաշտում ամփոփված հազարավոր թաղումներից մինչ այժմ պեղվել են հարյուրատասնհինգ շարքային դամբարաններ և տասնյակ մեծածավալ դամբանաբլուրներ, որոնք վերաբերում են միջին և ուշ բրոնզի, վաղ և զարգացած երկաթի դարաշրջաններին։

Աշխատությունում հանգամանորեն ներկայացվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիսարևելյան և ընդհանրապես Հարավային Անդրկովկասի միջին բրոնզի դարաշրջանի Կիրովական-Թռիալեթյան մշակույթը, որը հեղինակի կողմից ճանաչվում է որպես մ. թ. ա. III հազարամյակի տեղաբնիկների՝ հնդեվրոպացիների մշակույթի ժառանգորդ։ Նշվում է, որ այն խարսխված է դեռևս մ. թ. ա. III հազարամյակում քաղաքակրթությունների շեմը ոտք դրած, վաղ բրոնզի դարաշրջանի հասարակության տնտեսության, մշակույթի ապարեղած կոբեռպույն ձևավորումների վրա։

Հեղինակը գտնում է, որ նշված ժամանակաշրջանի համար հատկանշական են մշակութային առաջընթացի արագ տեմպեր, հասարակության կառուցվածքում փոխանակային արժեքների աճեցում, առևտրական կապերի ակտիվացում տարածաշրջանային երկրների, Հյուսիս-արևմտյան Իրանի, Կովկասի հետ, որոնք իրենց հերթին նպաստեցին Հայկական լեռնաշխարհի մի գոտի հատվածում մշակույթի զարգացմանը։

Աշխատության I-ին գլուխը նվիրված է Մեծամորի միջին բրոնզի դարաշրջանի դամբարանների ուսումնասիրությանը, որոնք պատկանում են այսպես կոչված «Կարմիրբերդյան» մշակույթին։ Անշուշտ ուսումնասիրության հիմքում թաղման ծեսն է և հայտնաբերված նյութերը։

Հատուկ ուսումնասիրության առարկա է Մեծամորի քարարկղներում հայտնաբերված գունազարդ և սև ազաթափայլ խեցեղենը։ Այն ներկայացված է բնորոշ ձևերով և զարդապատկերներով։ Առանձնացվում են գունազարդ խեցեղենի բնորոշ կոմպոզիցիաներ, որոնք ընդհանուր են հատկապես Կարմիրբերդյան մշակույթին։ Համեմատությունների լայն կտավի օգնությամբ ճշտվում է Մեծամորի դամբարաններում հայտնաբերված խեցեղենի թվագրությունը։

Հանգամանորեն ներկայացված են բրոնզե դաշույնները, տարատեսակ շրասեղները, քորոցները, նաև մածուկից պատրաստված ուլունքները, որոնք իրենց հերթին օգնում են Մեծամորի դամբարանները միջինից ուշ բրոնզի անցման փուլով, մ. թ. ա. XV դարի 1-ին կեսով թվագրելու։

Ամփոփելով թաղման ծեսի ուսումնասիրությունը, եզրակացվում է, որ ի տարբերություն

Կիրովական-Քրիալեթյանի, Կարմիրբերդյան դամբարաններն աղքատիկ են, նրանցում բացակայում են հասարակության շերտավորումն արտահայտող փաստեր։

Հեղինակը ժխտում է մասնագետների այն տեսակետը, թե Կարմիրբերդյան մշակույթին գուդա։հեռ գոյություն է ունեցել Սևան-ուզերլիկյանը։ Նյութերի մանրակրկիտ ուսումնասիրությամբ, թաղման ձևի վերլուծությամբ և հատկապես Մեծամորի դամբարանների պեղումների արդյունքներով հաստատվում է, որ դրանք պատկանում են միևնույն մշակույթին, որ լավագույն դեպքում Սևան-ուզերլիկյանը կարող է ներկայացնել Կարմիրբերդյան մշակույթի լոկալ տարբերակներից մեկը։

Հեղինակն իրավացիորեն չի ընդունում որոշ գիտնականների կողմից միջին բրոնզի դարաշրջանի մշակույթը միայն Կուր-արաքսյան միջադետքին վերագրելու տեսակետը։ Համամիտ չէ նաև Կ. Քուշնարյովայի այն կարծիքին, թե Թրիալեթյան մշակույթը նախապես զարգացել է Կուրի ավազանի միջին հոսանքներում, իսկ հետո, մ. թ. ա. XVI—XV դդ., այսինքն՝ Թրիալեթյան մշակույթի ավարտման փուլում, լայնորեն տարածվել է Արաքսից հարավ-արևելք։

Հեղինակի կարծիքով ուսումնասիրությունները հաստատում են, որ միջին բրոնզդարյան Կիրովական-Քրիալեթյան մշակույթը ըզբաղեցրել է Հայկական լեռնաշխարհի տարածքի մի զգալի մասը և որ այն այստեղ սկիզբ է առել դեռևս մ. թ. ա. III հազարամյակի վերջում։

Միաժամանակ ընդգծվում է, որ Կիրովական-Քրիալեթյան և Կարմիրբերդյան մշակույթները դեռևս քիչ են ուսումնասիրված և շատ հարցերի ամբողջական լուծումը պատկանում է ապագային։

Մենագրության 2-րդ գլուխը նվիրված է Մեծամորի ուշ բրոնզի (մ. թ. ա. XV դարի վերջ—XII դար) դարաշրջանի դամբարաններին։ Ուսումնասիրվող ժամանակահատվածը բնութագրվում է որպես քաղաքական կարևորագույն իրադարձությունների շրջան, որում առաջնակարգ տեղ է գրավում Հայասա-Ազզին։ Նշվում է, որ այդ ժամանակաշրջանում բրոնզեդարյան մշակույթը հասնում է իր զարգացման գագաթնակետին և, ինչպես մ. թ. ա. II հազարամյակի ասուրական սեպագրերն են վկայում, Հայկական լեռնաշխարհը դառնում է առաջավորասիական խոշոր լեռնամետաղագործական կենտրոններից մեկը։

Տնտեսության ծաղկումը, ինչպես գտնում է հեղինակը, ամրացնում է վերնախավի քաղաքական իրավունքները, որոնց ակնառու վկաները դամբանաբլուրների տակ սայլերով, իշխանության և պաշտամունքի խորհրդանիշերով, հարուստ գույքով դամբանաբլուրներն են (Լճաշեն, Լոռի-բերդ, Մեծամոր), որոնք ընդգծում են թաղված անձի սոցիալական ստատուսը։

Մեծամորում բազալտե սալերով կառուցված քարարկղները պատկանել են մեծաղարմ ազնվականներին, քրմական դասին։ Նման դամբանաբլուրների շարքն է դասվում 10-րդը, որում հայտնաբերվել են խարսխաձև պատվանդանով թռչունի քանդակ, երկկանթանի կաթսա, 500 մածուկե ուլունքներով բրոնզե թաս, հախճապակե թեյաման, սարդիոնե ուլունքներ, զոհաբերված կենդանիների ոսկորներ, խաղողի կորիզներ։

2-րդ դամբանաբլուրում հայտնաբերված թռչնաձև ունկերով բուրվառը, եզնիկի և վեց այծերի ոճավորված պատկերներով, կարմիր ներկով կատարված սվաստիկաներով բուրանոթ պատվանդանը, ըստ հեղինակի, հուշում են նրա՝ նշանավոր մի քրմի պատկանելը։ Բուրանոթի զարդապատկերների կոմպոզիցիան վերծանվում է որպես սակրալ մի պատկեր, որը կոչված է ապահովելու երկնային լուսատուների օգնությամբ հացահատիկի աճն ու պտղաբերությունը։ Գրքում ցույց են տրվում եղջերվի և այծի պաշտամունքի խորն արմատները Հայկական լեռնաշխարհում և նրանից դուրս։ Հեղինակը գրում է, որ նրանք իրենց պատկերային արտացոլումն են գտել ժայռապատկերներում, որմնանկարներում, խնցեղենի զարդապատկերներում, կնիքների վրա։ Հայտնի են նրանց ծավալային քանդակները։

4-րդ դամբանաբլուրում հայտնաբերված մածուկե գլանաձև կնիքին կենաց ծառի առջև կանգնած թևավոր նժույգի (Պեգասի) պատկերն է, որն ինչպես հեղինակն է նշում սիրված թեմա է առաջավորասիական գլիպտիկայի համար։ Նմանօրինակները հայտնաբերվել են Միտանիում, սակայն հեղինակի կարծիքով կատարման մանրամասներով Մեծամորինը գանազանվում է վերոհիշյալներից, բացի այդ, կնիքի կենաց ծառը հիշեցնում է Մուխաննաթ-թափայի կաղապարի վրա պատկերվածը և Մեծամորի կնիքը տեղական համարելով այն թվագրում է մ. թ. ա. XIII դարով։

Հեղինակի ուշադրությունից չեն վրիպել Մեծամորի դամբարաններում հայտնաբերված բրոնզե զենքերը։ Առաջավորասիական տիպի սուրը թվագրելով մ. թ. ա. XV դարի վերջով և XIV-ի սկզբով, նա ընդունում է այն մասնագետների կարծիքը, որոնք Հայաստանը համա-

ում են առաջավորասիական տիպի սրերի և դաշույնների արտադրության օջախներից մեկը և որ վերջիններս Հայաստանից են անցել Կովկաս։

Ուշ բրոնզի դարաշրջանով են թվագրվում ոսկե մեդալյոնները և ութ ռելիեֆ առյուծներով զարդարված կճուճը։

Հենվելով պեղումների տվյալների վրա, հեղինակը եզրակացնում է, որ իր պատմա-հնագիտական նշանակությամբ Մեծամորը կարող է համեմատվել Անդրկովկասի և առաջավորասիական կարևորագույն դամբարանադաշտերի հետ։ Ընդունելով տեղական ավանդույթների պահպանման և հետագա զարգացման փաստը, է. Խանզադյանը նշում է, որ Մեծամորի բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանների մեծածավալ դամբանաբլուրներն իրենց թաղման ձևով, բազմահարուստ նյութերով հանդիսանում են տնտեսության, արհեստների և արվեստի ձևավորման, դասակարգային ներհակությունների ուժեղացման, իշխող արտոնյալ դասի քաղաքական իրավունքների ամրապնդման ցայտուն վկայություն։

Առանձին գրվածների է արժան նաև գրքի ձևավորման էսթետիկական կողմը։ Այն մի շրջեղ հրատարակություն է, հագեցված բարձրորակ գրչանկարներով ու լուսանկարներով։ Ցավոր, սպրդել են որոշ վրիպակներ (օրինակ՝ համաստապությունները ներկայացնող մասում «Պատմա-բանասիրական հանդեսում» հիշատակվում է հայերեն և ռուսերեն, որպես երկու տարբեր պարբերականներ)։ Սխալներ ու վրիպակներ կան հայերեն շարադրված ամփոփման մեջ, որոնք ակնհայտորեն հրատարակչության անփութության հետևանք են։ Սակայն այս թերացումները շտկելի են և արժանին պետք է մատուցել գրքի հրատարակությունը կազմակերպողներին։

Ամփոփելով, կարելի է ասել, որ է. Խանզադյանի վերոհիշյալ աշխատությունը մի նոր խոսք է Հայկական լեռնաշխարհի միջին և ուշ բրոնզի դարաշրջանների մշակույթի և պատմության ուսումնասիրության ասպարեզում։

ՀՍՍՀ ԳԱԱ. ակադեմիկոս
Բ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ